

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2017թ. սեպտեմբերի 15-ի նիստի

Խորհրդի 42 անդամներից ներկա էին 33-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Ս.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2017-2018 ուսումնական տարվա աշխատանքային ծրագրի հաստատում:
2. Գիտական հաղորդում:
3. Անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորում:
4. Հաղորդում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ցերեկային ուսուցմամբ բակալավրիատի և մագիստրատուրայի 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների մասին:
5. Հաղորդում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 2016-2017 ուսումնական տարվա 1-ին լուծարքային շրջանի արդյունքների մասին:
6. Ընթացիկ հարցեր:

1. **ԼՄԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2017-2018 ուսումնական տարվա աշխատանքային ծրագրի հաստատում:**

Խորհրդի նախագահ Գ.Ղազինյանը ներկայացրեց գիտական խորհրդի 2017-2018 ուսումնական տարվա աշխատանքային ծրագիրը, որով նախատեսված է թվով ինը հերթական նիստերի անցկացում՝ ըստ անհրաժեշտության արտահերթ նիստեր հրավիրելու հնարավորությամբ: Խորհրդի քարտուղարը նշեց, որ նիստերի՝ ծրագրված օրակարգն ընդգրկում է գիտական հաղորդումներ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ամբիոնների կողմից իրենց գործունեության վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում, ընթացիկ և եզրափակիչ քննությունների արդյունքների ամփոփում, ֆակուլտետի ընթացիկ գործունեության հետ կապված այլ հիմնական հարցերի քննարկում: Խորհրդի քարտուղարն ընդգծեց, որ հաշվի առնելով գիտական հաղորդումների արդիականությունը 2017-2018 ուսումնական տարում՝ պայմանավորված սահմանադրական և դատաիրավական բարեփոխումներով, ծրագրով նախատեսվել է հրավիրել արտահերթ նիստեր՝ հատուկ գիտական հաղորդումների ներկայացման նպատակով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ն.Այվազյանը, պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը, դեկանի տեղակալ պրոֆ. Հ.Խաչիկյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի

2017-2018 ուսումնական տարվա աշխատանքային ծրագիրը:

2. ԼՍԵՑԻՆ. Գիտական հաղորդում (զեկ.՝ Քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, ի.գ.դ Վ.Հովհաննիսյանը):

Քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, ի.գ.դ Վ.Հովհաննիսյանը գիտական հաղորդման շրջանակներում անդրադարձավ քաղաքացիական դատավարությունում գործի ողջամիտ քննության պահաջնի ապահովման գործնական խնդրին: Ձեկուցողը նշեց, որ քաղաքացիական դատավարությունում սահմանվել են վերադաս դատարանի կողմից դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու դեպքում ստորադաս դատարանում գործերի քննության կարգի առանձնահատկություններ, մշակվել են նախնական դատական նիստի առավել ամբողջական կանոններ, հստակեցվել և կատարելագործվել են ապացուցման գործընթացը կարգավորող կանոնները, դատավարական օրենսգրքերով հնարավորինս սպառնիչ սահմանվել են նիստի հետաձգման հիմքերը՝ բացառելով նիստի հետաձգումը դրա համար չնախատեսված որևէ հիմքով, կատարելագործվել են դատական փորձաքննության նշանակման և անցկացման գործընթացը, ներդրվել են դատական վարույթների մասին ծանուցման առավել արդյունավետ մեթոդներ և դատական ծախսերի բաշխման արդար, թափանցիկ և հստակ համակարգ, կատարելագործվել դատական քննության պարզեցված ընթացակարգերը, ինչը թույլ է տալու լուծելու գործի ողջամիտ ժամկետուն քննության հիմնարար պահանջը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն (հաղորդումը կցվում է):

3. ԼՍԵՑԻՆ. Անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ն.Այվազյանը, պրոֆ. Տ.Բարսեղյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Հ.Խաչիկյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնաստության ընթացքում ցուցաբերած գերազանց առաջադիմությունը՝ որպես անվանական կրթաթոշակի թեկնածուներ՝ երաշխավորել հետևյալ անձանց.

1. Ստեփանյան Մարտուն Արթուրի (մագիստրատուրա, 2-րդ տարի)՝ Մխիթար Գոշի անվան կրթաթոշակ.
2. Գալստյան Քրիստինե Արտակի (մագիստրատուրա, 2-րդ տարի)՝ Գրիգոր Զոհրապի անվան կրթաթոշակ.
3. Թովմասյան Մերի Հրայրի (մագիստրատուրա, 2-րդ տարի)՝ ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի սահմանած Վլադիկ Ներսեսյանցի անվան կրթաթոշակ.
4. Մելիքսեթյան Կարեն Արտակի (բակալավրիատ 4-րդ տարի)՝ Յուրի Ղամբարյանի անվան կրթաթոշակ:

4. ԼՍԵՑԻՆ. Հաղորդում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ցերեկային ուսուցմամբ բակալավրիատի և մագիստրատուրայի 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների մասին:

Դեկանի տեղակալ, պրոֆ. Հ.Խաչիկյանը ներկայացրեց 2016-2017 ուսումնական տարվա ընդունելության արդյունքերը՝ առկա ուսուցմամբ 1-ին կուրս՝ 157 ուսանող և մագիստրատուրա 1-ին կուրս՝ 76 ուսանող, որից՝

Քրեական իրավունք և դատավարություն մագիստրոսական ծրագիր – 9 ուսանող,

Քաղաքացիական իրավունք և դատավարություն – 16 ուսանող,

Գործարարական իրավունք – 11 ուսանող,

Միջազգային և եվրոպական իրավունք – 16 ուսանող,

Կրիմինալոգիա – 9 ուսանող,

Իրավունքի տեսություն և սահմանադրական իրավունք – 17 ուսանող:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունելի գիտություն:

5. ԼՍԵՑԻՆ. Հաղորդում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 2016-2017 ուսումնական տարվա 1-ին տարվա լուծարքային շրջանի արդյունքների մասին:

Դեկանի տեղակալ, պրոֆ. Հ.Խաչիկյանը հայտնեց, որ առկա ուսուցմամբ բակալավրիատի 2016-2017 ուսումնական տարվա քննաշրջանի ավարտից հետո լուծարք ունեն 270 ուսանող, որից 61 ուսանող՝ 20 և ավելի կրեդիտ, հեռացվել է 2 ուսանող:

Առաջին լուծարքային շրջանից հետո լուծարք ունեն 180 ուսանող, որից 31 ուսանող՝ 15 և ավելի կրեդիտ, հեռացվում են 9 ուսանող:

Հեռակա ուսուցմամբ բակալավրիատի 2016-2017 ուսումնական տարվա քննաշրջանի ավարտից հետո լուծարք ունեն 269 ուսանող, որից 22 ուսանող հեռացվել են:

Առաջին լուծարքային շրջանից հետո լուծարք ունեն 189 ուսանող, որից 51 ուսանող՝ 15 և ավելի կրեդիտ, հեռացվում են 22 ուսանող:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունելի գիտություն:

6. Ընթացիկ հարցեր:

6.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Եվրոպական և միջազգային իրավունքի միջնորդությունը՝ Եվրասիայի միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի հայցորդ Մարտին Անդրանիկի Մանուկյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ.Գ.Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել՝ Եվրասիայի միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի հայցորդ Մարտին Անդրանիկի Մանուկյանի՝ «Պառլամենտարիզմի կայացման հիմնախնդիրները՝ ՀՀ Սահմանադրության իրացման համատեքստում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ,

մասնագիտությունը՝ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում».

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Ռ.Պետրոսյանին:

6.2 ԼՄԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Եվրոպական և միջազգային իրավունքի միջնորդությունը՝ Եվրասիայի միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի հայցորդ Մերրի Մանվելի Շահբազյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ.Գ.Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել՝ Եվրասիայի միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի հայցորդ Մերրի Մանվելի Շահբազյանի՝ «Քաղաքացիության ինստիտուտի հիմնահարցերը՝ հրանրային ծառայության համատեքստում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում».

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Ռ.Պետրոսյանին:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ.Սուջյան